

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Կորպորատիվ հաճախորդների սպասարկման
գլխավոր մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

Ապրիլի 30, 2022թ.

Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ փնտրում է փորձառու, մոտիվացված և հմուտ թեկնածուի Կորպորատիվ հաճախորդների սպասարկման գլխավոր մասնագետ հաստիքը զբաղեցնելու համար, ով պատասխանատու կլինի ստորև նշված գործառնությունները կատարելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաշվեդրամարկղային գործառնությունների իրականացում, այդ թվում
 - Կանխիկ դրամի տրամադրում և ընդունում
 - Արտարժույթի կանխիկ և անկանխիկ առք ու վաճառքի իրականացում, արտարժույթի հնամաշ դրամանիշերի փոխանակում:
 - Ավանդների ձևակերպում և սպասարկում
 - Հաշիվների, քարտերի բացում և սպասարկում
 - Իր կողմից բացված ընթացիկ, խնայողական, քարտային հաշիվների բացման պայմանագրերի (օֆերտան, ակցեպտը) Բանկի անունից ստորագրում
 - հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և մուտքագրում «Գործառնական օր» ծրագիր:
- Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի կնքում, պայմանագրի դադարեցում, փոփոխություն, ստորագրում
- Հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթերի տրամադրում
- Չեկային գրքույկների տրամադրում, արժեքների ի պահ ընդունում:
- Պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառնությունների իրականացում:
- Հաճախորդների համար առավել/նվազ բարենպաստ՝ արտոնյալ պայմանների հաստատման գործընթացի իրականացում (նոր սակագին, և այլն),
- Հաճախորդներին Բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համապատասխան խորհրդատվության/տեղեկատվության տրամադրում
- Հաճախորդների ներգրավում, խաչաձև վաճառքի իրականացում, պլանային առաջադրանքների կատարում, նոր ուղիների որոնում և իրագործում
- Հաճախորդներին աջակցություն Բանկի քարտերի ակտիվացման, մոբայլ հավելվածներում սինքրոնացման հարցերում:
- Անհատական պահատեղերի վարձակալության պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, պահատուփային ծառայության մասով հաճախորդների սպասարկում (հաճախորդի ուղեկցում, և այլն), Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:
- Իր կողմից տրամադրված անհատական պահատուփերի վարձակալության պայմանագրերի և ապահովագրական վկայագրերի Բանկի անունից ստորագրում

- Հաճախորդներին հեռակառավարման համակարգերի տրամադրում, համապատասխան պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, դրանց հետ կապված և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում :

ՊԱՅԱՆՔՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն տնտեսագիտական/ֆինանսական կրթություն,
- 2-3 տարվա համապատասխան մասնագիտական փորձ,
- Դրամաճանաչություն, կանխիկ դրամի հետ աշխատելու փորձ,
- ՀՀ բանկային օրենսդրության իմացություն,
- Համակարգչային գիտելիքների լավ իմացություն (MS Office),
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների իմացություն,
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություն,
- Ինքնակազմակերպման և ժամանակի կառավարման հմտություններ,
- Վաճառքի հմտություններ,
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ,
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն,
- Տարբեր իրավիճակներում աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակություն,
- Միաժամանակ մի քանի առաջադրանքներ կատարելու ունակություն,
- Ծշտապահություն և պատասխանատվության զգացում,
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավորվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» ՓԲԸ անվանումով:

«ԱյԴԻ Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն Նորար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: